

ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՊԱՂՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ինտելեկտուալ զարգացման խախտումների, այդ թվում նաև դրա հապաղման ժամանակ, հոգեբանական նորակազմությունների ձևավորումը դանդաղ է տեղի ունենում: Հետազոտողներն ընդգծում են, որ հոգեկան զարգացման հապաղմամբ (ՀՁ) երեխաների ինքնագիտակցությունը և անձնային զարգացման մյուս ասպեկտները դրսևորվում են ավելի հազվադեպ, քան նրանց ճանաչողական զարգացումը: Մինևույն ժամանակ, հատուկ կրթության ժամանակակից միտումները նպատակաուղղված են զարգացման խախտումներով երեխաների կենսական իրազեկության, սոցիալական շարժունության ապահովման անհրաժեշտությանը¹. «Աստիճանաբար ակնհայտ է դառնում անձնային, սոցիալ-զգայական զարգացման, ինքնագիտակցության և ինքնաճանաչման զարգացման, երեխայի վարքի գիտակցականության և իրական կյանքի ամբողջ պատրաստվածության դերի ու տեղի վերահիմնադրման անհրաժեշտությունը»²: Սրանով պայմանավորված արդիական են դառնում համապատասխան ծրագրերի ու պայմանների մշակումն ու ներդրումը³: Հետևաբար, այդ գործընթացում էական է զարգացման խախտումներով երեխաների ինքնագիտակցության ձևավորման հնարավորությունների ուսումնասիրումը:

ՀՁ երեխաների անձնային զարգացման բավական ամբողջական բնութագրում են տալիս Ն. Բելոպոլսկայայի և Ե. Մլեպովիչի հետազոտությունները⁴:

Ն. Բելոպոլսկայան հաստատել է մի շարք էական առանձնահատկություններ ինտելեկտուալ զարգացման խանգարումներով երեխաների ինքնագնահատականի և հավակնությունների կայացման մեջ: Օգտագործելով սեռատարիքային նույնականացման գեահատման սեփական մեթոդիկան՝ հեղինակը մի շարք հետաքրքիր փաստեր է արձանագրել: Նախ, ինտելեկտուալ զարգացման խախտումներով երեխաները թեև կարող են նույնականացվել անցյալի, ներկայի և ապագայի կերպարներին, այդուհանդերձ նրանք ի գործ չեն կառուցելու լրիվ նույնականացման հաջորդականություն: Երկրորդ՝ այդ երեխաների միայն մի մասն է կողմնորոշված դեպի ապագա՝ հետևելով որևէ նախընտրելի կերպարի: Ապագայի կեր-

¹ Гончарова Е., Дмитриева Д. Фотолетопись жизни маленького человека: для него, для меня, для нас // Дошкольное воспитание. 2006. № 8. стр. 102-111.

² Дети с задержкой психического развития/Под ред. Т. Власовой, В. Лубовского, Н. Цыпиной М., 1984.

³ Аронова Е. Взаимосвязь структур самосознания и стиля саморегуляции деятельности // М-лы III Всероссийского съезда психологов, 25-28 июня 2003, СПб. 2003. Т. 1. стр. 204 - 208.

⁴ Белополюская Н. Психологическое исследование половозрастной идентификации у детей со снижением интеллекта // Дефектология 1992. № 1 стр. 5-15.

պարը, ինչպես հայտնի է, ունի մոտիվացիոն ուժ: Նորմալ զարգացող երեխաները հիմնականում ընտրում են այդպիսի կերպարներ, իսկ ինտելեկտուալ զարգացման խանգարմամբ (ԻԶԽ) երեխաների մի մասն իր ընտրությունում կանգ է առնում միայն իր ներկա կերպարի վրա: Դպրոցական ուսուցման առաջին տարիներին ընտրության առանձնահատկությունը կանխատեսման նշանակություն ունի հապաղման փոխհատուցման հեռանկարների համար: Մոտիվացիոն պատկերացումների հատկանիշների առկայությունը չհայտնաբերած երեխաները հետագայում ցուցաբերում են զարգացման դանդաղ դինամիկա⁵:

ԻԶԽ երեխաներն ընդունակ են հասկանալու բարոյական բովանդակությամբ պատմվածքների իմաստը (անհատականացված ներկայացման պայմանով): Ն.Բլեյպոլսկայայի կողմից դա գնահատվել է որպես զգայական պատկերացման պլանում գործելու և կերպարի հետ նույնականացվելու հնարավորություն:

Երեխաների ինքնագիտակցության ախտորոշման հեղինակի կողմից օգտագործված բոլոր հեարներն ունեն տարբերակախտորոշիչ նշանակություն: Մտավոր հետամնաց երեխաներն զգալիորեն ավելի վատ են կատարում ախտորոշման հանձնարարությունները: Հետազոտության նշանակալի արդյունքներից մեկը ինքնագնահատման նախադրյալների ձևավորման բեռնոշ ընթացքի նկարագրման հնարավորությունն է⁶:

Ե. Սվետովիչի բազմաթիվ աշխատություններում բացահայտվել է, որ երեխաներն ավելի հաճախ փոխանցում են մեծածախսակների դատողությունները: Երեխաների արժեքային կողմնորոշումները չեն վերաբերում անհատական-հոգեբանական հատկություններին, ունեն կիրառական (պրագմատիկ) ուղղվածություն:

Մեծածախսակների վարքի բարոյական նորմերի հասկացումը ՀԶՀ առավել ավագ երեխաների մոտ կրում է անձնական բնույթ: Այդ երեխաների վարքի բարոյական նորմերով կարգավորումը կապված է իրավիճակի ըմբռնման հետ, միանշանակ իրավիճակներում նրանք ավելի հաճախ դեկավարվում են նորմով: Ե.Սվետովիչը այդ փաստը կապում է զգայական երևակայության թերությունների հետ: Մեր տեսակետից դա հերթական անգամ ապացուցում է, որ երեխաների խոսքային և իրական վարքի մակարդակները ապահամաձայնեցված են:

ԻԽԶ-ների ամենամեծ փոփոխությունները իրենց և շրջապատի մասին տեղի են ունենում այն ոլորտներում, որոնք ներկայացված են նրանց գործունեության մեջ: Գործունեության կոնկրետ տեսակներում համարժեք ինքնագնահատականը հասանելի է դառնում երեխաների մեծամասնությանը, բայց սեփական անձնային հատկությունների մասին պատկերացումները մնում են անփարժեք:

Ե. Սվետովիչը էական տարբերություն է հայտնաբերել համեմատաբար թեթև և համեմատաբար վառ արտահայտված ԻԽԶ երեխաների մոտ: Երկրորդ խմբի երեխաները դրսևորում են ակնհայտ նմանություն մտավոր հետամնացների հետ,

⁵ Белопольская Н. Половозрастная идентификация. Методика исследования детского самосознания. М., 1998, стр. 24.

⁶ Նույնը:

նրանք բնորոշում են շրջապատող մարդկանց իրենց կողմից իրականացվող գործունեության միջոցով: Նրանց առնչումը հասակակիցների և մեծահասակների հետ գերազանցապես իրավիճակային է, վարքի կարգավորման հնարավորությունները նվազագույնն են, նրանք ղեկավարվում են միայն գործուն արժեքներով⁷:

Տ.Գորդեևայի և Գ.Միշինայի ստացած տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ «Ես» կերպարի անկատարության պատճառները թաքնված են ընտանեկան փոխհարաբերությունների առանձնահատկությունների մեջ: Հեղինակները հաստատել են, որ այդ երեխաների մոտ բացակայում է բարեկամների՝ առաջին հերթին մոր հետ զգայական մտերմությունը, նրանք չգիտեն և չեն հասկանում մյուս մարդկանց զգացմունքների դրսևորումները, մեծ վախ և անվստահություն են զգում նրանց հանդեպ⁸:

Ե. Դմիտրիևայի աշխատանքներում ԻՍՋ երեխաների սոցիալ – անձնային զարգացման մեջ հաստատվել է մեծահասակների հետ առնչվելու հանգամանքի կարևորությունը: Հեղինակը «Ես» կերպարի սոցիալական բաղադրամասում առանձնացրել է այն խախտումները, որոնք իրենց արտացոլումն են գտնում անբավարար սոցիալական իրազեկության մեջ: Հասակակցի նկատմամբ կարեկցանք դրսևորելու անհրաժեշտության դեպքում նրանք ցուցաբերել են զգայական խլություն և սոցիալամետ վարքի աննշան պատրաստակամություն, վարքային ինքնակարգավորման ցածր մակարդակ: Այդ երեխաների սոցիալական իրազեկությունը ճշտվել է հաղորդակցական գործունեության զարգացման մակարդակով: Ե.Դմիտրիևան եզրակացություն է արել ՀՋՀ նախադպրոցականների «Ես» կերպարի՝ ոչ թե ուղղակի հապաղված, այլ ձևափոխված լինելու մասին⁹: Այդ արդյունքները հաստատում են Ն.Բելոպոլսկայայի, Ի.Կորոբեյնիկովայի և այլ հետազոտողների կարծիքները:

Բոլոր թվարկված թերությունները հանգեցնում են այն բանին, որ ինտելեկտուալ զարգացման խանգարումներով երեխայի դպրոց գնալն ուղեկցվում է բազմաթիվ դժվարություններով և անհարմարություններով: Լ.Կուզնեցովան ցույց է տվել, որ կրտսեր դպրոցական տարիքի շեմին ՀՋՀ երեխաներն ունեն ուսուցման անբավարար անձնային (մտտիվացիոն) պատրաստակամություն, որը կապված է վարքի կամային կարգավորման անընդունակության հետ¹⁰:

Վարքի կարգավորման անբավարար հնարավորությունները կապված են նաև ուղեղի կառուցվածքի անխաթմբության հետ, ինչն ապացուցված է ֆիզիոլոգ

⁷ Слепович Е. Психологическая структура задержки психического развития в дошкольном возрасте: Автореф. дис. д-ра психол. наук: М., 1994.

⁸ Гордеева Т., Мишина Г. Роль близкого взрослого в становлении «образа Я» у ребенка с задержкой психического развития // Дефектология. 2005. № 1. стр. 47-51.

⁹ Дмитриева Е. Коммуникативно-личностное развитие детей дошкольного и младшего школьного возраста с легкими формами психического недоразвития: Дис.... д-ра психол. наук: Нижний Новгород, 2005.

¹⁰ Кузнецова Л., Особенности мотивационно-волевой готовности детей с ЗПР к школьному обучению // Автореф. дис. ... канд. психол. наук: М., 1986; Кузнецова Л. Особенности мотивационно-волевой готовности детей с задержкой психического развития к школьному обучению // Дефектология. 1981. № 6. стр. 28-34.

Մ. Ֆիշմանի հետազոտություններում: Մ.Ֆիշմանը համահեղինակների հետ ցույց տվեց, որ հեարավոր են նյարդաֆիզիոլոգիական անբավարարության երկու տարբերակ, որոնք պայմանավորում են ՀՁՀ դեպքում զգայական տհասությունը և վարքային խախտումները¹¹:

Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ ցանկացած երեխայի զարգացում ենթարկվում է օրինաչափությունների, որոնք նկարագրված են Մ.Դոմիշկևիչի ֆունկցիոնալ-մակարդակային մոտեցման հայեցակարգում: Վերջինս հոգեկան զարգացումը ներկայացնում է որպես հաջորդական գալարային աստիճանների անցկացում¹²: Հեղինակի կարծիքով, բարձրագույն հոգեկան ֆունկցիաները դառնում են անկաշխանդ միայն ճանաչողական գործունեության ձևավորվածության, այսպես կոչված, երրորդ մակարդակում: Այդ մակարդակը նորմալ զարգացող երեխայի կողմից նվաճվում է վեց-յոթ տարեկանից ոչ շուտ: Սակայն, պատահում է, որ նույնիսկ նորմալ զարգացող առաջին դասարանցիների մոտ այն դեռ ամբողջապես չի ձևավորվել: Նախադպրոցականի համար «նորմատիվային» է ճանաչողական գործունեության երկրորդ մակարդակը, որում առավել ակտիվորեն ձևավորվում են սեփական գործունեության և վարքի գիտակցման հնարավորությունները:

Ինտելեկտուալ զարգացման խանգարումների դեպքում ստորին մակարդակներից յուրաքանչյուրին անցնելու ժամկետները երկարացվում են: ՀՁՀ նույնիսկ առավել «բարենպաստ» երեխաների համար 6-7 տարեկանում բնորոշ է հենց երկրորդ մակարդակը, ընդ որում, երեխան գտնվում է «գալարի» պտույտի հենց սկզբում: Դա հաստատվում է նրանով, որ երեխաներն իրենց գործունեության կազմակերպման մեջ դեռևս կախված են մեծահասակներից: Նրանք ոչ միշտ են ճիշտ գիտակցում իրենց առջև դրված խնդիրները, չեն կարող հեռավոր նպատակներ դնել և ստորադասել «մոտիվները»: Այդ պատճառով զգայական վիճակի կառավարման ընդունակությունը անհրաժեշտ է ձևավորել առանձնահատուկ, ինչը նշում է Ն. Բաբկինան¹³: Այդպիսի ընդունակության ձևավորման հաջողությունը ենթադրաբար կախված է ինքնագիտակցման հնարավորության զարգացումից:

Անհրաժեշտ է հիշատակել, որ նախադպրոցական հասակի սահմաններից դուրս ՀՁՀ երեխաների ինքնագիտակցության թերությունները դրսևորվում են բավականին հստակ: Այդպիսի երեխաների բարձր ինքնագնահատականն սկսում է կրել գերփոխհատուցողական բնույթ:

Ի.Կոնևայի ուսումնասիրած ճշտվող ուսուցման պայմաններում գտնվող

¹¹ Фишман М. Нейрофизиологические механизмы отклонений в умственном развитии у детей: Учебное пособие. М., 2001; Фишман М., Лукатевич И., Мачинская Р. Особенности функционального состояния мозга детей с задержкой психического развития // Дефектология. 1998. № 1, стр. 24-29.

¹² Домишкевич С. Функционально-уровневый подход к психодиагностике и коррекции познавательной деятельности в норме и при отклонениях в развитии//Дефектология. 2005 № 4, стр. 47-53.

¹³ Бабкина Н. Психологическая готовность к школьному обучению с задержкой психического развития у детей//Диагностика и коррекция задержки психического развития у детей. М., 2004, стр. 70-104.

ՀՀ կրտսեր պատանիների ես-կերպարում էական տարբերություններ են հայտնաբերվել՝ համեմատած նորմալ զարգացող հասակակիցների հետ: ՀՀ դեռահասները 10-11 տարեկանից նոր միայն սկսում են վերլուծել իրենց գործողությունները և արարքները, նրանց նկարագրությունները կապված են կոնկրետ իրավիճակների հետ¹⁴: Ստացված արդյունքները քիչ են տարբերվում այն տվյալներից, որոնք բերում է Ե. Սլեպովիչը՝ չնայած տարիքային լայնայթը փորձարկվողների մեջ կազմել է 4 տարուց ոչ պակաս: Այդ պատճառով անհրաժեշտ է մտածել այն մասին, որ դա ոչ միայն սոցիալական հարաբերությունների համակարգի խախտման հետևանք է, ինչպես ենթադրում է Բ.Կոնսան, այլ նաև երեխաների անձնային զարգացման հանդեպ ուշադրության պակասի: Բացի դրանից, այդ տվյալները մի անգամ ևս հստակ ապացուցում են ՀՀ երեխաների կոնտինգենտի ոչ միատարրությունը¹⁵:

Բավականին հետաքրքիր է երեխայի իր անձին դիմելու միջոցով կարգավորման որոշ հմտությունների ձևավորման փորձը: Ինքնագիտակցության տարրերի ձևավորումը նախադպրոցականների մեջ բավականին արդարացված է, քանի որ, ինչպես արդեն ասվել է, բարձրագույն հոգեկան ֆունկցիաների հիմնական բնութագրումը հենց գիտակցվածությունն է, որը դրսևորվում է այդ հասակում:

Վերջինը, որն անհրաժեշտ է դիտարկել, ՀՀ նախադպրոցականների ինքնագիտակցության տարրերի ձևավորման հոգեբանամանկավարժական պայմանների հարցն է:

Ինչպես արդեն նշվել է վերևում, ներկայումս ընդգծվում է ոչ նորմալ երեխաների ուսուցման և դաստիարակության կազմակերպման հույժ կարևորությունը, որի դեպքում նրանք ընդունակ կլինեն, ինչքան հնարավոր է, շուտ «օգտագործել իրենց նվաճումները ինտելեկտուալ զարգացման մեջ, իրենց և շրջապատող մարդկանց համար տեղի ունեցածի իմաստի սանձաման, խնդիրների, աշխարհընկալման և արժանի կենսակառուցվածքի լուծման համար»¹⁶:

ՀՀ 6 և 7 տարեկան երեխաներին դպրոցին նախապատրաստելու ընթացքում օգտագործվող ծրագրի վերլուծությունը ցույց տվեց, որ ճշմոտ-զարգացնող գործընթացի ձևավորվող խնդիրների շարքում առաջինը «ՀՀ երեխայի բովանդակալից գործունեություն իրականացնելու համար հնարավորության ստեղծումն է, որը կնպաստի հոգեկան զարգացման համակողմանիությանը»: Ճշտող-զարգացնող աշխատանքի բովանդակություն ներառվում են այնպիսի բաժիններ, որոնք նվիրված են շրջակա միջավայրին ծանոթացմանը, իր և իր ընտանիքի, մանկապարտեզի աշխատողների մասին պատկերացումների ձևավորմանը: Հեղինակներն առաջարկում են համապատասխան պարապմունքների վարման ձևեր, վարժություններ և դիդակտիկ խաղեր: Սակայն, ինքնագիտակցության տարրերի ձևավորման նպատակը չի ձևակերպվում: Գ.Եֆրեմովայի առաջարկած ծրագրում

¹⁴ Конева И. Особенности образа Я младших подростков с задержкой психического развития. Автореф. дис. ... канд. психол. наук. Н.Новгород, 2002.

¹⁵ Слепович Е., նշվ. աշխ., էջ 45:

¹⁶ Конева И., նշվ. աշխ., էջ 21:

առաջարկվում է ՀՀ2 ավագ նախադպրոցականների մոտ բարոյագիտական ինքնակարգավորման փուլային ձևավորում¹⁷:

Այսպիսով, գործող ծրագրերում, որոնց համաձայն՝ ՀՀ2 ունեցող նախադպրոցականների հետ իրականացվում է Հշտող-գարգացնող աշխատանք, չի արտացոլվում ինքնագիտակցության տարրերի ձևավորման հաջորդական համակարգը: Մինևույն ժամանակ հատուկ կրթական հաստատությունների աշխատանքի փորձից հետևում է, որ համարժեք հոգեբանական ուղղորդման դեպքում ՀՀ2 այն երեխաները, որոնք որոշակի մակարդակով գիտակցում են իրենց հնարավորությունները, տարբերվում են իրենց հասակակիցներից՝ դրսևորելով առավել ընդունելի վարքագիծ: Նրանք ազատորեն հաղորդակցության մեջ են մտնում մյուս երեխաների և մեծահասակների հետ, նրանց վարքում գերակայում են հավասարակշռվածությունը և համարժեք դրական զգացմունքները:

Օժանդակ կրթական հաստատությունների ծրագրերում սոցիալական զարգացմանը մեծ կարևորություն է տրվում ինտելեկտուալ խանգարումներով երեխաների հետ աշխատելիս: Ծրագրի հեղինակները՝ Ե.Եկմանովան և Ե.Ստրեբլովան, անձի սոցիալականացումը սահմանում են որպես գործընթաց և երեխաների՝ շրջակա աշխարհի մասին պատկերացումների ձևավորման արդյունք: «Սոցիալական զարգացում» բաժնում աշխատանքի ամբողջ բովանդակությունը ներկայացված է երեք բաղադրիչներով՝ «Ես ինքս», «Ես և ուրիշները», «Ես և շրջակա աշխարհը»: Հշտող-գարգացնող աշխատանքի ժամավարություններից է մանկավարժական հատուկ պայմանների ստեղծումը, որոնք կապահովեն երեխայի համագործակցությունը մեծահասակների հետ: Հաջորդաբար, ուսուցման առաջին չորս տարվա ընթացքում մտավոր հետամնաց երեխաները կարողանում են լուծել իրենց և մյուսների մասին պատկերացումների, սոցիալական հավակնությունների ենթակա վարքային կանոնների, իրենց գործողությունների և արարքների գնահատման ձևավորման խնդիրները: Սոցիալական զարգացման խնդիրների իրականացման ընթացքում նախատեսված են լուսանկարների, ֆոտոալբոմների, խաղալիքների, ինչպես նաև գեղարվեստական ստեղծագործությունների, տեսանյութերի, տարբեր պատկերազարդումների օգտագործումը, որոնց բովանդակությունը արտացոլում է մարդկանց հուզական վիճակը: Ծրագրային պահանջների համաձայն՝ ուսուցման չորրորդ տարվա վերջում մտավոր հետամնաց երեխաները պետք է հասնեն սոցիալական զարգացման այնպիսի մակարդակի, որն անհրաժեշտ է հատուկ Հշտող դպրոցի պայմաններին ադապտացվելու համար:

Սոցիալական զարգացման գործընթացի կազմակերպումը իրականացվում է տարբեր մասնագետների համագործակցության արդյունքում: Դեֆեկտաբան-ուսուցիչը անցկացնում է համապատասխան բովանդակության պարապմունքներ: Հոգեբան-մանկավարժը աշխատում է երեխաների, նրանց ընտանիքների հետ նպաստելով երեխայի հուզական ոլորտի բարելավմանը: Հենց հոգեբանն է գնահատում նախադպրոցականների սոցիալամետ վարքի առանձնահատ-

¹⁷ Ефремова Г. Формирование саморегуляции поведения у старших дошкольников с ЗПР: Дис. канд. психол. наук: Н.Новгород, 1997.

կությունները և անեքաժեշտության դեպքում իրականացնում դրա ճշտումը աշխատանքային տարբեր մեթոդների, խորհրդատվությունների և ծնողների հետ մարզանքի միջոցով: Անձնային ոլորտի շտկումն իրականացվում է նաև երաժշտական պարապմունքների միջոցով: Լազոպեդ-ուսուցչի մասնագիտական աջակցությունը երեխաների խոսքի, հաղորդակցական գործառնությունների զարգացման լավագույն միջոցներից է: Այսպիսով, ծրագրի հեղինակները հատուկ տեսակի ՄՈՒՀ-ում առաջարկում են այնպիսի հոգեբանամանկավարժական պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն երեխաների՝ առցիումի հետ փոխգործակցության ունակությունների անընդհատ և օպտիմալ ձևավորմանը:

Ե.Գոնչարովան և Օ.Կուկուշկինան հատուկ դպրոցում ուսուցման նոր բովանդակության՝ «Մարդու ներաշխարհ», դասընթացը նախագծելիս ընդգծում են ուսուցման եենքային փուլերը, որոնք նպաստում են ինքնաձանաչման, ինքնագիտակցության և վարքի գիտակցական կարգավորման սկզբնական աստիճանների զարգացմանը:¹⁸ Փուլայնությունն ապահովում է մարդու ներաշխարհի ձանաչողական վերաբերմունքի զարգացումը, որը հիմնվում է երեխայի նախ և առաջ կյանքի իրադարձությունների հետաքրքրության վրա: Անձնական առցիալական փորձը հիմք է ծառայում ներքին կյանքի երևույթների ամփոփումների համար: Ծրագրային փորձարկումների արդյունքում ստացված տվյալները վկայում են աշխատանքի առաջարկվող բովանդակության արդյունավետությունը կրտսեր դպրոցական հասակում զարգացման շեղումներով երեխաների ինքնագիտակցության ձևավորման գործում:

Նախադրոցականների ինքնագիտակցության տարրերի ձևավորման քննարկվող հիմնախնդրի համատեքստում ուղադրության է արժանի դաստիարակության և ուսուցման ծրագիրը մանկապարտեզում, որը մշակվել է մի խումբ հեղինակների կողմից և հրատարակվել է Մ.Վասիլևայի, Վ.Գերբովայի և Տ.Կոմարովայի խմբագրությամբ¹⁹: Վերոնշյալ ծրագրում պետք է ընդգծել դրա բովանդակության ուղղվածությունը երեխայի իր (Ես կերպարի), ուրիշների մասին պատկերացումների, առցիալամետ հմտությունների դաստիարակության հաջորդաբար (2-ից 7 տարեկան) զարգացմանը:

Ե.Սլեպովիչի հետազոտությունները հաստատել են մեծահասակների բացառիկ դերը 2-3 լախադպրոցականների մոտ «Ես» կերպարի ձևավորման գործում: Մեծահասակը երեխայի մեջ դաստիարակում է ճիշտ վարքագիծ, ձևավորում է համարժեք ինքնավերաբերմունք, որի համար օգտագործվում է երեխայի անձի դրական գնահատականը: Արտասահմանյան հոգեբանների հետազոտությունները նույնպես հաստատում են, որ այն ծնողները, ովքեր իրենց երեխաներին վաղ տարիքից ակտիվորեն ներառել են բժշկահոգեբանական և հոգեբանամանկավար-

¹⁸ Гончарова Е., Дмитриева Д., *ևշվ աշխ.*, էջ 102-111: Гончарова Е., Кукущкина О. *Дневник событий жизни ребенка: первая рабочая тетрадь к курсу "Внутренний мир человека"*. Дефектология. 1998. № 5, стр. 26-39.

¹⁹ Программа воспитания и обучения в детском саду: /Под ред. М. Васильевой, В. Гербоовой, Т. Комаровой. - 2-е изд., испр. и доп. - М., 2005.

Ժական ուղղորդման համալիր ծրագրերում, բավականին մեծ արդյունավետություն են նկատել ինչպես երեխաների զարգացման, այնպես էլ ծնող-երեխա փոխհարաբերությունների բարելավման առումով²⁰։ Այդպիսով, մեծահասակների և հասակակիցների հետ փոխգործունեությունը կարևորագույն պայման է, բայց դա անբավարար է, քանի որ ինչպես ընտանիքում, այպես էլ ՄՈՒՀ-ի պայմաններում ինտելեկտուալ զարգացման խախտումներով երեխաների սոցիալական իրավիճակը առանձնահատուկ է։

Ն. Բելուպոլսկայան առաջարկում է ինքնագիտակցության զարգացման համալիր մեթոդ, որը գուգորդում է զրույցը և սեռատարիքային նույնականացման մեթոդիկայի աշխատանքները ընտանեկան այլումների հետ։ շեղյունակ առանձնացում է ծնողների և մեծահասակների առաջատար դերը երեխաների սեռատարիքային նույնականացման ձևավորման մեջ։ Մեծահասակները, հիշելով իրենց մանկության հատվածները, փոխվում են երեխայի աչքերում։ Այդպիսի նպատակաուղղված աշխատանքի արդյունքում երեխան ըմբռնումով է վերաբերվում մեծահասակներին²¹։ Ե.Գուչարովան և Դ.Դմիտրիևան առաջարկում են երեխաների հետ ստեղծել այլում-գրքույկներ՝ փաթեթիկ մատրո ֆոտոտարեգրությունը, և նշում են, որ լուսանկարները անհրաժեշտություն, հենարան են դառնում անցալի, ներկայի և ապագայի վերաբերյալ զրույցների համար։ Ֆիզիկական «Ես» կերպարի զարգացման մեջ հատուկ ուշադրություն է դարձվում հայելու, լուսանկարների, դիտողական մոդելների հետ աշխատանքին²²։ Երեխաների իրենց կերպարի ընկալումն ունի գրգռման քիմիաբանական բնույթ։ Այդ պատճառով, երանց մեջ զարգացնելով սեփական մարմնի սխեմայի մասին պատկերացումները, անհրաժեշտ է միաժամանակ ձևավորել նաև վերաբերմունք սեփական մարմնին։ Դա նվաճվում է այն դեպքում, երբ մարդու մասին պատկերացումների զարգացմանը գուզընթաց, մեծահասակը տալիս է դրական գնահատում։

Այսպիսով, ինքնագիտակցության և ինքնագնահատականի տարրեր ասելով՝ մենք հասկանում ենք այն առանձին հատկանիշները, որոնք վերաբերում են երեխայի մեջ ձևավորվող սեռատարիքային նույնականացմանը՝ որպես «Ես» կերպարի ձևավորման սկզբնական փուլ, սոցիալական ընդունման հավակնությունները, ինքնագնահատականը՝ որպես ընկալման և իրեն գնահատելու զուբալ բնութագիր, հոգեբանական ժամանակի ձևավորումը (իր մասին պատկերացումները անցյալում և ապագայում), անձի սոցիալական տարածությունը, որում ձևավորվում և դրսևորվում է զգայական նույնականացման և ապակենտրոնացման հնարավորությունների բարոյական նորմերի հասկացումը, ինչպես նաև մեծահասակի հրահանգով ինքնուրույն գործելու ընդունակությունը։

Ինքնագիտակցության տարրերի ձևավորման հոգեբանամանկավարժական պայմաններ ասելով՝ հասկանում ենք հոգեկան զարգացման հապաղումով երեխաների գտնվելը փոխհատուցող տեսակի ՄՈՒՀ ճշտող-զարգացնող միջա-

²⁰ Слепович Е., *ibid.*, աշխ., էջ 45։

²¹ Белопольская Н. 1998, *ibid.*, աշխ., էջ 24։

²² Гончарова Е., Кукушкина О., *ibid.*, աշխ., էջ 3-15։

վայրում և հատուկ ծրագրերի իրականացումը ուղղված նրանց ինքնագնահատականության զարգացմանը: Ծրագրերի իրականացման հիմնական սկզբունքներից են երեխայի իր մասին պատկերացումների սկզբնական ասպեկտներում, գործունեության տարբեր տեսակներում մանկավարժ-դեֆեկտոլոգի, մանկավարժ-հոգեբանի, մուտցիչ-լոգոպեդի պարապմունքների ու հևարների ներդաշնակ կիրառությունը, գործունեության արդյունավետ տեսակները, ռեժիմային պահերը, ազատ գործունեությունը, խաղը, ֆիզկուլտուրայի և երաժշտական պարապմունքները: Հատուկ պայմանները մեր կողմից դիտարկվում են որպես առաջին կարգի անկախ փոփոխական: Որպես երկրորդ կարգի անկախ փոփոխական կդիտարկվեն երեխայի հոգեբանական բնութագրերը, որոնք վկայում են նրա կողմից անձնային հասունության որոշակի մակարդակի նվաճման մասին, որը թույլ է տալիս կառավարել իր վարքը:

ПРОБЛЕМЫ САМООЦЕНКИ И ПРЕТЕНЗИЙ У ДЕТЕЙ С ЗАДЕРЖАННЫМ ПСИХИЧЕСКИМ РАЗВИТИЕМ

Резюме

О. Погосян

Автор статьи обратился к исследованию возможностей формирования самосознания у детей с психическими расстройствами.

Во время расстройства интеллектуального развития психологическое формирование новосоставляющих происходит медленно. Исследователи подчеркивают, что задержанием психического развития самосознание и остальные аспекты личностного развития детей проявляются реже, чем их познавательное развитие. В то же время современные тенденции особого образования целенаправлены на жизненную осведомленность и необходимость обеспечения социальной двигательности детей с задержанием психического развития.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պոդոբյան Օլգա Արթուրովնա - ԳՊՄԻ հոգեբանության
ամբիոն, E-mail:olgapoghosyan85@mail.ru